Մրցույթի հայտարարություն

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2021 թվականի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի դեկտեմբերի 29-ին՝ ժամը 14:00-ին,

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղի N3 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար դիմել խորհրդի անդամ Թեհմինա Կարապետյանին

Հեռ. 041-09-54-00, էլ. հասցե noratus3@schools.am